

«ԱՆԱՀԻՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Կը ցաւիմ որ Անահիտի ժժ. տարուան երկրորդ վեցամսեայ թիւը կարելի չեղաւ հրապարակ հանել անցեալ տարուան Դեկտեմբերին, ինչպէս ծանուցած էի, որովհետեւ «Արաք» տպարանը, չափազանց շատ գործ ունենալով, չկրցաւ ժամանակին հասցնել այդ թիւին տպագրութիւնը: Այդ թիւը լոյս կը տեսնէ հիմայ, ժժ. տարուան առաջին վեցամսեայ թիւին հետ մէկտեղ: Կը յուսամ որ այսուհետեւ տարեկան երկու միացեալ թիւերը ժամանակին պիտի կարենան լոյս տեսնել:

Շնորհակալ եմ այն բոլոր քարեկամներուն ու գրասէրներուն որ փութացին իրենց բաժնեգինը՝ եւ ոմանք նաեւ նուէր մը բաժնեգինին հետ՝ զրկել ինծի, Թեթեւցնելու համար Անահիտի վերերեւման ծախքերուն ծանրութիւնը: Եղան նոյն իսկ որ՝ նկատի ունենալով Քրանքին այժմեան կացութիւնը՝ տարեկան 350 Քրանքը անբաւական գտան իբր բաժնեգին, եւ առաջարկեցին որ 500 Քրանքի բարձրացնեմ զայն: Որովհետեւ նիւթական համեստ կա-

ցութիւն ունեցող գրասէրներուն մատչելի մնայ Անահիտի բաժանորդագրութիւնը, որոշեցի 50 Քրանքի միայն յաւելում մ'ընել տարեկան բաժնեգինին վրայ: Ուրեմն 13րդ տարին սկսեալ տարեկան բաժնեգինը պիտի ըլլայ 400 Քր., Ֆրանսայի, Սուրբոյ, Լիբանանի, Պարսկաստանի, Պելճիքայի, Զուիցերիոյ, Պալքանեան երկրներու համար: 5 տուարը կը մնայ անփոփոխ՝ Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայի, Եգիպտոսի, Անդլիոյ եւ այլ երկրներու համար:

Կան զեռ սակայն բաւական բազմաթիւ հալքեակիցներ որ տարիներէ ի վեր չեն վճարած իրենց բաժնեգինը, կամ որ ստացան անցեալ տարի ժԱ. եւ ժԲ. տարիներու միացեալ թիւը, ետ չը դարձուցին, բայց զեռ չեն զրկած իրենց բաժնեգինը: Կը խնդրեմ անոնցմէ որ հաճին իրենց բաժնեգինը — կամ բաժնեգինները — զրկել ինծի որքան կարելի է շուտ:

Ա. 2.

Վ Ր Ի Պ Ա Կ

ԱՆԱՀԻՏԻ ներկայ թիւի էջ 16էն յետոյ, 17ը սխալմամբ թուագրուած է 33 եւ շարունակուած, բայց յօդուածներու շարունակութիւնը ճիշդ է: